ԺԱՄԱՆԱԿԻՆ ՀԱՄԱՔԱՅԼ

«Ժամանակին Համաքայլ» ամսագիրը պարունակում է տվյալ ամսում «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից իրականացված գործունեության համապարփակ նկարագիրը:

ԴԵԿՏԵՄԲԵՐ #22

- ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
- ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ
- ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ
- ՀԿ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔՆԵՐ

#ngngo

© Copyright ngngo
"New Generation" Humanitarian NGO
2016

Հայաստան 0019, ք.Երևան, Բաղրամյան 49, բն. 7
+374 60 378989 +374 60 478989
newgenerationngngo@gmail.com http://ngngo.net/

ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐՈՒՄ ԵՆՔ ՆԱԵՎ ՄԱՐԶԵՐՈՒՄ

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի Մարդու իրավունքների և շահերի պաշտպանության ծրագրերի համակարգող Նարե Հովհաննիսյանն այսօր մասակցել է «Խտրականության դեմ պայքարի և հանուն հավասարության կոալիցիայի» համաժողովին, որը կրում էր «Խտրականությունը Հայաստանում. մեկ տարի անց» խորագիրը:

Համաժողովին հրավիրված էին ՀՀ պետական կառավարման մարմինների, ՀՀ-ում գործող միջպետական կազմակերպությունների և դիվանագիտական ներկայացուցչությունների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Միջոցառման առաջին մասում բանախոսները ներկայացրել են այս ոլորտում հայաստանյան խնդիրները, լուծման ուղիները: Ներկայացվել է նաև կոալիցիայի գործունեությունը հակախտրականության ոլորտում, խոսվել է օրենսդրական դաշտի խնդիրների, ապահով տարածքների ու դրանց ստեղծման կարևորության, ինչպես նաև խտրականության պատճառների, ընդունված կարծրատիպերի ու դրանց բացասական հետևանքների մասին: «Նոր Սերունդ»-ի ներկայացուցիչ Նարե Հովհաննիսյանը ևս ելույթ է ունեցել համաժողովի ժամանակ: Ներկայացնում ենք նրա խոսքն առանց կրճատումների:

– Թույլ տվեք շնորհակալություն հայտնել այս նախաձեռնության համար և նշել, որ ինձ համար առանձնակի կարևոր է ներկայացնել այն աշխատանքները, որոնք «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն իրականացրել է առավել խտրականության ենթարկվող անձանց, մասնավորապես ԼԳԲՏԻ անձանց պայքարի առաջնորդներ դարձնելու ուղղությամբ թե՛ Բաց Հասարակություն Հիմնադրամներ Հայաստան կազմակերպության ֆինանսական աջակցության շնորհիվ, և թե «Խտրականության դեմ պայքարի և հանուն հավասարության» կոալիցիայի շրջանակներում: Նախ կարևոր է իրավագիտակցության մակարդակի բարձրացումը: Շատ հաճախ հասարակական կազկակերպություններն իրենց աշխատանքները կենտրոնացնում են Երևանում և մարզի համայնքը դուրս է մնում մեր ուշադրությունից: Այս խնդրին մասամբ լուծում տալու համար մենք շատ մեծ ուշադրություն ենք դարձնում մարզերում տարվող աշխատանքներին: Մասնավորապես, Իրականացնում ենք դասընթացներ մարդու իրավունքների, խտրականության կանխարգելման, ատելության խոսքի և խոսքի ազատության թեմաներով: Դասընթացների առանձնահատկությունն այն է, որ ԼԳԲՏԻ անձինք դասընթացներին մասնակցում են մնացած մասնակիցների հետ, չեն առանձնացվում, ԼԳԲՏԻ անձանց մարդու իրավունքների խախտումների դեպքերի, պաշտպանության մեխանիզմների ստեղծման, նրանց նկատմամբ կիրատվող խտրականության և պայքարի միջոցների մասին արվում է ընդհանուր քննարկում, ինչը նպաստում է մի կողմից ԼԳԲՏԻ անձանց ներգրավմանը, մյուս կողմից՝ լսարանում հանդուրժողականության մթնոլորտի և փոխհասկացվածության ստեղծմանը: Մենք համայնքի համար իրականացնում ենք նաև առողջապահական թեմաներով, մասնավորապես «ՄԻԱՎ-ը և մարդու իրավունքները» թեմայով դասընթացներ: Այս դասընթացները օգնում են տեղեկանալ ՄԻԱՎ-ին առնչվող առողջապահական ծառայությունների հասանելիության իրավախախտումներին, իրենց իրավունքներին և պաշտպանության մարմիններին: Նման դասընթացները կոնկրետ խմբերի համար են նախատեսված: Ուստի ԼԳԲՏԻ անձանց առնչվող խնդիրները առավել լայն մասշտաբով քննարկելու և բարձրաձայնելու համար մենք նախաձեռնում ենք տարբեր քննարկումներ և կոնֆերանսներ, որոնց շրջանակներում մինչև այժմ պետական,

միջազգային և դիվանագիտական կառույցների ներկայացուցիչների հետ քննարկել ենք ԳԲՏ / SUS անձանց զինվորական ծառայության, տրանսգենդեր անձանց սեռափոխության կարիքների, իրավական խոչընդոտների գնահատման և իրավական կարգավորումների հարցերը: Այս քննարկումներին հրավիրվում ենք նաև ԼԳԲՏԻ անձինք և ստեղծված հարթակն օգտագործում են իրենց խնդիրները դեմ առ դեմ քննարկել հրավիրյալների հետ: Մենք իրականացնում ենք նաև ՄԻԱՎ-ին առնչվող առողջապահական ծառայությունների հասանելիության կարիքների գնահատումն ուղղված հանդիպումներ, որոնց ժամանակ ԼԳԲՏԻ անձինք ներկայացնում են առկա բացերը՝ առաջիկայում ՄԻԱՎ-ի կանխարգելմանը, խնամքին և բուժմանը առնչվող ծառայությունների հասանելիության վերաբերյալ համապատասխան արդյունքները և բացթողումները ՄԻԱՎ-ին հակազդման 2017-2020 Ազգային ծրագրում ներառելու նպատակով: Եվ հկ-ներ, և համայքնի ներկայացուցիչներ: Տրամադրում ենք իրավախորհրդատվություն, որի արդյունքները բավականին խոստումնալից են: Նախ ականատես ենք լինում այն փաստին, որ համայնքի ներկայացուցիչները պատրաստակամ են կանգնելու իրենց խախտված իրավունքները վերականգնելու համար, պատրաստ են դիմելու իրավաբանի կամ փաստաբանի օգնությանը, հետամուտ լինելու իրենց խախտված իրավունքների վերականգնմանը դատական մարմիններում: Այստեղ կարևորն այն է, որ ԼԳԲՏԻ անձինք դիմում են ոչ միայն իրենց սեռական կողմնորոշման պատճառով դրսևորված տարբերակված վերաբերմունքի կամ խախտված իրավունքի պատճառով, այլև ամենատարբեր հարցերով՝ աշխատանքային, ընտանեկան և այլն: Սա մեզ համար բավականին կարևոր ցուցանիշ է և հույս է ներշնչում, որ մեր կողմից տեսական գիտելիքները հարստացնելուն ուղղված աշխատանքները ապարդյուն չեն անցնում: Տրամադրում ենք նաև ենթադրամաշնորհներ, որոնք մի քանի առումներով են նպաստում ԼԳԲՏԻ անձանց առաջնագիծ բերելուն: Նախ այս ենթադրամաշնորհների շնորհիվ արդեն ստեղծվել է 3 կազմակերպություն՝ Միացյալ ուղի, Միացյալ գույներ և Իրավունքի ՀԿ-ները, որոնք զբաղվում են ԼԳԲՏԻ անձանց հարցերով իրավապաշտպանության, տուրիզմի և այլ ոլորտներում: Ուզում եմ նշել, որ «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն Հայաստանում առաջին կազմակերպությունն է, որը զբաղվում է տրանսգենդեր անձանց խնդիրներով:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏԱՍԽԱՆԵԼ Է «ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ»-Ի ԴԻՄՈՒՄԻՆ

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի անդամներ Արման Սահակյանն ու Գրիգոր Գևորգյանը դիմել էին ՀՀ արդարադատության նախարար Արփինե Հովհաննիսյանին՝ խնդրելով հարուցել կարգապահական վարույթ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավորներ Նարինե Բարսեղյանի, Լևոն Գրիգորյանի եւ Մարգարիտա Հարթենյանի նկատմամբ: Հիմքը դատավորների ոչ իրավաչափ վարքագիծն է, որը դրսևորվել էր Ազգային Ժողովի Հանրապետական խմբակցության պատգամավոր Հայկ Բաբուխանյանի ներագդմամբ:

Արդարադատության նախարարությունից պատասխան է ստացվել Արման Սահակյանի և Գրիգոր Գևորգյանի դիմումի վերաբերյալ: «Կատարված ուսումնասիրությամբ պարզվել է, որ դիմումը չի պարունակում դատավորների կողմից ՀՀ դատական օրենսգքրի 153-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով սահմանված դատավարական նորմի ակնհայտ և կոպիտ խախտում կատարելու վերաբերյալ առերևույթ հիմք»,- նշված է նախարարության աշխատակազմի ղեկավարի կողմից ուղարկված պատասխանում:

Նշենք, որ նույն դիմումը «Նոր Սերունդը» ուղարկել էր նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտնպանին: Վերջինիս ևս պատասխան է ստացվել, համաձայն որի, Արման Սահակյանի և Գրիգոր Գևորգյանի դիմումը որպես դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ հաղորդում ներկայացվել է ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողով:

ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԳԵԼՔԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՏՈՒՐԻԶՄԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

2016թ. դեկտեմբերի 13-ին «Միացյալ Ուղի» Բարեգործական ՀԿ-ն կազմակերպել էր «Խտրականության արգելքի կարևորությունը տուրիզմի զարգացման ոլորտում» խորագրով սեմինար-վարժանք, որի նպատակն էր տեսական և գործնական պարապմունքների, ինչպես նաև խաղերի ու քննարկումների միջոցով նպաստել մասնակիցների տեղեկացվածության ու գիտելիքների աճին՝ խտրականության, տուրիզմի և տուրիզմի զարգացման ոլորտում խտրականության արգելքի կարևորության մասին: Սեմինարին ներկա էին թվով 10 մասնակիցներ,ովքեր ունեին փորձ ոչ միայն տուրիզմի,այլ նաև տարբեր ոլորտներում: Սեմինարը հնարավորություն ընձեռեց մասնակիցներին ծանոթանալու տուրիզմի, դրա տեսակների և ուղղությունների մասին, որին հաջորդեց ակտիվ քննարկում:

Սեմինարին որպես դասընթացավար հրավիրված էին «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի Մարդու իրավունքների և շահերի պաշտպանության ծրագրերի համակարգող Նարե Հովհաննիսյանը և իրավաբան Հայարփի Նորեյանը, ովքեր ներկայացրել են «Խտրականության տեսակները» թեման:

ՔԱՂԱՔԱՑԻՆ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆԸ ԽԱԽՏԵԼՈՒ ԱՌԹԻՎ ԴԻՄԵԼ Է ԴԱՏԱՐԱՆ

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի իրավաբանական բաժին է դիմել քաղաքացի Ա.Ս.-ն՝ խնդրելով իրավաբանական աջակցություն, քանի որ ՀՀ զինվորական կոմիսարիատը խախտել է իր անձնական տվյալների գաղտնիությունը:

Քաղաքացու վարորդական իրավունքի ուժը կորցրած է ճանաչվել Ճանապարհային Ոստիկանության կողմից՝ հիմնվելով ՀՀ զինվորական կոմիսարիատի փոխանցած տեղեկատվության վրա: ՀՀ զինվորական կոմիսարիատը Ճանապարհային Ոստիկանությանն էր տրամադրել 2010-2012թթ. հոգեկան հիվանդություններով պարտադիր զինվորական ծառայությունից ազատված (ժամանակավորապես ոչ պիտանի ճանաչված) անձանց ցանկը, այդ թվում՝ Ա.Ս.-ին վերաբերող անձնական տվյալներ:

Քաղաքացին, գտնելով, որ խախտվել է իր անձնական տվյալների գաղտնիության իրավունքը, «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի իրավաբանական բաժնի օգնությամբ դիմել է ՀՀ վարչական դատարան և ՀՀ Արդարադատության նախարարության Անձնական տվյալների պաշտպանության գործակալության պետ Շուշան Դոյդոյանին: Դատարանին քաղաքացի Ա.Ս.-ն խնդրել է ոչ իրավաչափ ճանաչել ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության կողմից ՀՀ ոստիկանության

էլեկտրոնային ռեգիստրում կատարված գրառումը իր վարորդական վկայականը ուժը կորցրած ճանաչելու մասին, ինչպես նաև ճանաչել իր նկատմամբ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության կողմից դրսևորված խտրականության արգելքի խախտման փաստը՝ հոգեկան հիվանդության հիմքով: Իսկ Շուշան Դոյդոյանին քաղաքացին խնդրել է ճանաչել իր անձնական տվյալների գաղտնիության խախտման փաստը ՀՀ զինվորական կոմիսարիատի կողմից:

ԱՐՄԱՆ ՍԱՀԱԿՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ Է ՄԻԱՎ-ՈՎ ԱՊՐՈՂ ՄԱՐԴԿԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՌԿԱ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Եվրասիա համագործակցություն հիմնադրամը Հայաստանում Ֆրանսիայի դեսպանության և Եվրոպայի խորհրդի երևանյան գրասենյակի աջակցությամբ դեկտեմբերի 15-ին կազմակերպել էր «Հավասար իրավունքներ, հնարավորություն յուրաքանչյուրի համար: Պայքար խտրականության դեմ» խորագրով քննարկում: Միջոցառման բացումն ազդարարել են ժան-Ֆրանսուա Շարպանտիեն՝ Հայաստանում Ֆրանսիայի դեսպան, Նատալյա Վուտովան՝ Երևանում Եվրոպայի խորհրդի գրասենյակի ղեկավար, Գևորգ Տեր–Գաբրիելյանը՝ Եվրասիա համագործակցություն հիմնադրամի տնօրեն, Հրաչ Պալյանը՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի տեղակալ :

Միջոցառմանը ելույթ է ունեցել նաև «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի երեւանյան գրասենյակի ղեկավար Արման Սահակյանը՝ անդրադառնալով Հայաստանում ՄԻԱՎ-ով ապրող անձանց նկատմամբ խտրական վերաբերմունքին: Ներկայացնում ենք Արման Սահակյանի խոսքն ամբողջությամբ.

Ողջույն բոլորին,

Թույլ տվեք շնորհակալություն հայտնել ԵՀՀ-ին հրավերի և այս գեղեցիկ նախաձեռնության համար:

Այստեղ ներկա կազմակերպություններից և ոչ միայն այսօր այստեղ ներկաները, այլ առհասարակ խտրականության նվազեցման վերացման ուղղությամբ աշխատող կառույցները/ յուրաքանչյուրը աշխատում է տարբեր խմբերի հետ, որոնց խնդիրները տարբեր են, սակայն ընդհանրական է այն, որ այդ խմբերը հասարակության կողմից խտրական վերաբորմունքի են ենթարկվում՝ ունենալով այս կամ այն սոցիալական կարգավիճակը: Այս կազմակերպություններին միավորում է մեկ ընդհանուր նպատակ՝ խտրականության իսպառ վերացում Հայաստանում: Եթե տարիներ առաջ խտրականության իսպառը վերացումը միայն տեսլական էր այդ կազմակերպությունների համար, ապա այսօր արդեն ժամանակն է այն ռազմավարական նպատակի վերածելու և այդ ուղղությամբ գործելու համար:

Ես Արման Սահակյանն եմ, ներկայացնում եմ «Նոր Սերունդ» Մարդասիրական Հասարակական Կազմակերպությունը: Այն հիմնադրվել է 1998թ.-ին, իրավապաշտպան կազմակերպություն է, որը զբաղվում է մարդու իրավունքների և շահերի պաշտպանությամբ, իրականացնում է ՄԻԱՎ-ի կանխարգելման ծրագրեր հասարակության խոցելի խմբերի շրջանում:

Այս կոնտեքստում շատ կարևոր է այն, որպեսզի մենք համատեղ բարձրաձայնենք իրավապաշտպանության ոլորտի խնդիրների մասին և փորձենք միասին փնտրել խտրականության դեմ պայքարի ուղիներ:

Մի փոքր վիճակագրություն ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի մասին Հայաստանի Հանրապետությունում

ԸստՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնի տվյալների՝ 1988թ. մինչև 2016թ. նոյեմբերի 30-ը Հայաստանի Հանրապետությունում գրանցվել է ՄԻԱՎ վարակի 2482 դեպք ՀՀ քաղաքացիների շրջանում: ՄԻԱՎ վարակով հիվանդների ընդհանուր կազմում գերակշռում են արական սեռի ներկայացուցիչները՝ 1714 մարդ (69%), իգական սեռի ներկայացուցիչների մոտ արձանագրվել է վարակի 768 դեպք (31%): ՄԻԱՎ վարակի 45 դեպք (1,8%) է արձանագրվել երեխաների մոտ: ՄԻԱՎ-ով վարակվածների 52%-ը ախտորոշման պահին եղել է 25-39 տարիքային խմբում: Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ վարակի փոխանցման հիմնական ուղիներն են հետերոսեքսուալ ճանապարհը (66%) և թմրամիջոցների ներարկային օգտագործման միջոցով վարակումը (25%): Սրանցից բացի, արձանագրվել են հոմոսեքսուալ ճանապարհով, մորից երեխային և արյան միջոցով ՄԻԱՎ վարակի փոխանցման դեպքեր: ՄԻԱՎ-ով ապրող մարդիկ ունեն միևնույն իրավունքներն ինչ մյուս քաղաքացիները, մինչդեռ նրանց ՄԻԱՎ դրական կարգավիճակ ունեցող անձանց իրավունքները ոտնահարվում են գրեթե բոլոր ոլորտներում:

– Հաճախ գործատուն հրաժարվում է աշխատանքի ընդունել ՄԻԱՎ-ով ապրող մարդուն կամ իմանալով ՄԻԱՎ-ի նկատմամբ իր աշխատակցի դրական կարգավիճակի մասին՝ հեռացնում է նրան:

– Բուժաշխատողները, իմանալով անձի ՄԻԱՎ-ով վարակված լինելու մասին, հրաժարվում են նրան օգնություն ցուցաբերել:

– Հաճախ ՄԻԱՎ-ով ապրող մարդիկ, վախենալով տնից կամ համայնքից վտարվելու հեռանկարից, թաքցնում են իրենց հիվանդությունը և չեն դիմում օգնության, որը կարող էր բարելավել նրանց կյանքի որակը և երկարացնել կյանքի տևողությունը:

Կարող եմ պատմել 2 կարճ օրինակ, թե ինչպես է դրսևորվել խտրականություն ՄԻԱՎ-ով ապրող մեկ կնոջ և մեկ երեխայի նկատմամբ

Հայաստանի քաղաքներից մեկում, իմանալով կնոջ ՄԻԱՎ դրական կարգավիճակի մասին, վերջինիս հեռացրել են աշխատանքից և անձի անձնական տվյալը, այս պարագայում ՄԻԱՎ ունենալու փաստը հայտնել բոլոր նրան ճանաչողներին: Կինը ստիպված է եղել դուրս գալ աշխատանքից և որոշ ժամանակ անց լքել է երկիրը ընտանիքի հետ միասին:

ՄԻԱՎ-ով ապրող երեխային Երևանում հրաժարվել են ցուցաբերել ատնաբաուժական օգնություն, որի պատճառով երեխան մոտ 5 օր տառապել է ատամի ցավից: Մեր միջոցով միայն համապատասխան բողոք ներկայացնելուց հետո երեխային ցուցաբերել են անհրաժեշտ օգնություն պետական բժշկական հաստատությունում:

Խարանի և խտրականության երկու դրսևորման կարող ենք հանդիպել՝ արտաքին՝ երբ հանրություն է առանձնացնում մարդուն իրենից, և ներքին՝ երբ մարդն ինքն է իրեն առանձնացնում հասարակությունից:

Իսկ ինչի է հանգեցնում խարանի և խտրականության ենթարկվելու վաղը

Խարանի և խտրականության ենթարկվելու վախը մարդկանց հետ է պահում հետազոտվելուց և ՄԻԱՎ-ի նկատմամբ իրենց կարգավիճակը պարզելուց: Այն հանգեցնում է մի շարք բացասական հետևանքների՝ ժամանակին բուժում չստանալու, ՁԻԱՀ-ի կանխարգելում և այլն: Այս հիմնախնդիրը արդիական է դառնում ոչ միայն ՄԻԱՎ-ով ապրող մարդու, այլև՝ նրա ընտանիքի անդամների համար: Այս ամենը, ի վերջո, խոչընդոտում է ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց ինտեգրմանը հասարակություն, հանրային առողջության, ՄԻԱՎ-ի կանխարգելման, խնամքի և բուժման ծրագրերում և ծառայություններում: Իսկ որոնք են ՄԻԱՎ-ով ապրող անձանց խտրականության ենթարկելու պատճառները Հիմնականում գիտելիքի պակասն է. Երբ մարդը չգիտի, օրինակ, փոխանցման ուղիների մասին, կարող է նույնիսկ խուսափել ՄԻԱՎ-ով ապրող մարդու հետ նույն սեղանի շուրջ նստելուց կամ նույն սպասքից օգտվելուց, ինչն էլ իր հերթին

բերում է ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց մեկուսացման:

Իմացության պակասը հանգեցնում է որոշ կարծրատիպերի ձևավորմանը: Օրինակ՝ ՄԻԱՎ-ը փոխանցվում է կենցաղային շփման, միջատների խայթոցի, համբույրի միջոցով, օդակաթիլային եղանակով և այլն…

Մեկ այլ կարծրատիպ է այն, որ ՄԻԱՎ վարակը համարվում է միայն կոնկրետ խմբի մարդկանց բնորոշ հիվանդություն՝ նույնասեռականներ, թմրանյութ օգտագործողներ, մարմնավաճառներ և այլն: Ինչպես նաև բազմաթիվ մարդիկ համոզված են, որ ՄԻԱՎ-ով ապրող մարդն անպայման արտաքնապես տարբերվում է մյուսներից, մինչդեռ դա իրականությանը չի համապատասխանում: Հայաստանի Հանրապետության ՁԻԱՀ-ի հակազդման ազգային ռազմավարական ծրագրում առանձնացվում են հասարակության խոցելի խմբեր, որոնք առվել ռիսկային են ՄԻԱՎ-ի նկատմամբ՝ ԿՍԿ-ներ, ՏՍՏ-ներ, ԹՆՕ և երիտասարդներ: Այս խմբերի ներկայացուցիչները խոցելի են ոչ այն պատճառով, որ վարակի հիմնական տարածողներն են /ինչը նույնպես այժմյան կարծրատիպ է հասարակության շրջանում/, այլ այն հանգամանքի պատճառով, որ արդեն իսկ ելնելով իրենց սոցիալական կարգավիճակից՝ ենթարկվում են խտրականության հասարակության կողմից՝ բժշկական հաստատություն, ոստիկանություն, աշխատատեղ և այլն: Գենդերային հիմքով խտրականություն, որի մասին ավելի մանրամասն կխոսի իմ գերծընկերը:

Տարածված թյուր կարծիքներից է այն, որ տղամարդու պարագայում սեռական ճանապարհով վարակվելը համարվում է նորմալ, մինչդեռ կնոջ պարագայում շատ հաճախ հետևում է կնոջը պիտակավորելը՝ պայմանավորված հասարկությունում առկա գենդերային կարծրատիպերով:

Նրանց իրավունքների պաշտպանության, նրանց նկատմամբ ոչ խտրական վերաբերմունքի շնորհիվ հնարավոր է նվազեցնել համաճարակի պատճառած վնասները և կանխել դրա հետագա տարածումը:

Այսպիսով ՄԻԱՎ ունեցող մարդը հասարակությունում ասոցացվում է անցանկալի անձի հետ, ումից պետք է զգուշանալ: Հասարակության մեջ առկա վախը վերացնելուն ուղղված ամենակարևոր քայլը ՄԻԱՎ-ի փոխանցման ուղիների և ՄԻԱՎ-ի վերաբերյալ համակողմանի տեղեկատվության տարածումն է:

Այս գործընթացն արդյունավետորեն կազմակերպելու համար անհրաժեշտ է համախմբել հասարակության բոլոր խավերին, բնակչությանը տրամադրել ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ ճշգրիտ տեղեկատվություն, պայքարել ՄԻԱՎ-ով ապրող կամ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ից տուժած մարդկանց նկատմամբ քննադատական վերաբերմունքի, վախի և սխալ պատկերացումների դեմ, ընդլայնել ՄԻԱՎ-ով ապրող կամ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ից տուժած մարդկանց տրամադրվող աջակցությունն ու խնամքը:

- Իրազեկության բարձրացումը,
- ՄԻԱՎ վարակին առնչվող խարանի և խտրականության վերացմանն ուղղված ծրագրերի պատշաճ իրականացումը, անձնակազմի մշտական ուսուցումը ՄԻԱՎ վարակի կանխարգելման հարցերով,
- ՄԻԱՎ վարակի վերաբերյալ կամավոր խորհրդատվությունն ու հետազոտությունը:

ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԿՈՉԵՐ ՀՈՎԱՆԱՎՈՐՈՂ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՈՒՅԹ ՉԵՆ ՀԱՐՈՒՑԻ

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի անդամներ Արման Սահակյանն ու Գրիգոր Գևորգյանը դիմել էին ՀՀ արդարադատության նախարար Արփինե Հովհաննիսյանին՝ խնդրելով հարուցել կարգապահական վարույթ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավորներ Նարինե Բարսեղյանի, Լևոն Գրիգորյանի եւ Մարգարիտա Հարթենյանի նկատմամբ: Նույն դիմումը «Նոր Սերունդը» ուղարկել էր նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին, վերջինս էլ դիմումը որպես դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ հաղորդում ներկայացվել էր ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողով: Հանձնաժողովը պատասխանել է Պաշտպանի հաղորդմանը՝մերժելով վարույթի հարուցումը: Հանձնաժողովի որոշմանը կարող եք ծանոթանալ այստեղ:

ՍԵՄԻՆԱՐ ՎԱՆԱՁՈՐՈՒՄ

2016 թվականի դեկտեմբերի 16-ին «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն «ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի կանխարգելումը և տեղեկացվածության մակարդակի բարձրացումը SUS-ների շրջանում Շիրակի, Լոռու մարզերում և Երևան քաղաքում» ծրագրի շրջանակներում Լոռու մարզի Վանաձոր քաղաքում անցկացրել է սեմինար «ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի կանխարգելումն ու ՄԻԱՎ-ի թեստավորման կարևորությունը», «Մարդու իրավունքները իրավապահ համակարգում» և «Մարդու իրավունքներն ու ՄԻԱՎ-ը» թեմաներով:

ՄԻԱՎ-ԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՁԳԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ Է ԿԱՁՄՎԵԼՈՒ

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն 2016 թ.-ի հոկտեմբերից Վրաստանում Նիդերլանդների Թագավորության դեսպանատան ֆինանսական աջակցությամբ իրականացնում է «Հայաստանում ՄԻԱՎ-ի հակազդման համար քաղաքացիական հասարակության կառույցների աջակցություն և հզորացում» ծրագիրը:

Ծրագրի շրջանակներում իրականացվելու են թիրախային համայնքների կարիքների գնահատում, որը նպաստելու է ՁԻԱՀ-ի հակազդման ազգային ծրագրի իրականացմանը՝ շահերի պաշտպանության, կարողությունների զարգացման և լոբբինգի միջոցով, ինչը ուղղված է ՄԻԱՎ-ին առնչվող առողջապահական ծառայությունների հասանելիության դյուրացմանը, թափանցիկությանը և հավասարությանը: ՄԻԱՎ-ին առնչվող ծառայությունների հասանելիության, մեթոդների ու գործիքների ձեռնարկը մշակելու նպատակով էլ 2016 թ.-ի դեկտեմբերի 17-18-ը կազմակերպվել էր դասընթաց Գյումրիում, որին մասնակցում էին տղամարդկանց հետ սեռական հարաբերություն ունեցող տղամարդկանց (SUS), տրանսգենդեր անձանց (ՏԳ), ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց, թմրամիջոց ներարկային օգտագործողների և կոմերցիոն սեռական ծառայություններ մատուցող

կանանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող և այլ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ՝ Երևանից և Հայաստանի տարբեր մարզերից:
Միմյանց հետ ծանոթանալուց մասնակիցները առավել հանգամանորեն խոսեցին ՄԻԱՎ-ի կանխարգելմանն ուղղված ծրագրերի և ծառայությունների մասին, որոնք իրենց կազմակերպությունները տրամադրում են շահառու խմբերին՝միևնույն ժամանակ անդրադառնալով ծառայությունների մատուցման ձևերին, շահառու խմբերի հետ աշխատելու առանձնահատկություններին և դժվարություններին, ինչպես նաև ծրագրերի իրականացման թիրախային շրջաններին:

Այնուհետև ցուցադրվեց «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից նկարահանված «ՄԻԱՎորված պայքար» ֆիլմը, որի դիտումից հետո մասնակիցները քննարկեցին այն խնդիրները, որոնց մասին բարձրաձայնվել է ֆիլմում, մասնավորապես ՁԻԱՀ-ին հակազդման ազգային ծրագրին առնչվող հարցերը:

Ծրագրի փորձագետ Միհրան Սևումյանը ներկայացրեց ՄԻԱՎ-ի կանխարգելմանն ուղված ծառայությունների հասանելիության, որակի և առաջնահերթության գնահատման ձեռնարկը, որը մշակվել է «Հայաստանում ՄԻԱՎ-ի հակազդման համար քաղաքացիական հասարակության կառույցների աջակցություն և հզորացում» ծրագրի շրջանակներում:

Ձեռնարկը ներկայացնում է ՄԻԱՎ-ին առնչվող ծառայությունների/ապրանքների հասանելիության, որակի և առաջնահերթությունների գնահատման մեթոդներն և գործիքները, ֆոկուս խմբերի ձևավորման և խմբային քննարկումների սկզբունքները, հանդիպումների կազմակերպչական ընթացքը, ինչպես նաև ՄԻԱՎ-ին առնչվող ծառայությունների ցանկը, որը պետք է գնահատվի:

Մասնակիցները ձեռնարկի վերաբերյալ իրենց առաջարկները կատարելուց հետո գործնական քննարկման միջոցով կատարել են ՄԻԱՎ-ին առնչվող ծառայությունների գնահատում՝ ըստ ձեռնարկում նշված մեթոդների և գործիքների:

Ծրագրի արդյունքում ակնկալվում է կազմել ՏՍՏ-ների, տրանսգենդեր անձանց, ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց, ԹՆՕ-ների և ԿՍԿ-ների՝ ՄԻԱՎ-ին առնչվող առողջապահական ծառայությունների վերաբերյալ ազգային հաշվետվություն և վերջինիս հիման վրա քննության առնել ՄԻԱՎ-ին առնչվող առողջապահական ծառայությունների պետական բյուջետավորումը:

ՍԵՄԻՆԱՐ ԳՅՈՒՄՐԻՈՒՄ

2016 թվականի դեկտեմբերի 16-ին «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն «ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի կանխարգելումը և տեղեկացվածության մակարդակի բարձրացումը ՏՍՏ-ների շրջանում Շիրակի, Լոռու մարզերում և Երևան քաղաքում» ծրագրի շրջանակներում Շիրակի մարզի Գյումրի քաղաքում իրականացրել է սեմինար «ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի կանխարգելումն ու ՄԻԱՎ-ի թեստավորման կարևորությունը», «Մարդու իրավունքները իրավապահ համակարգում» և «Մարդու իրավունքներն ու ՄԻԱՎ-ը» թեմաներով:

«ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԸ» ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՀՅՈՒՐԸՆԿԱԼԵԼ ԷՐ ԳԵՐՄԱՆԱԲՆԱԿ ՌՈՒՍԱԽՈՍ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻՆ

2016 թվականին «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն բազմաթիվ հաջողություններ է արձանագրել, որոնցից մեկն էլ գերմանաբնակ գործընկերների հետ նոր որակի համագործակցության ձեռքերումն է: Այս տարի «Նոր Սերունդը» Հայաստանում հյուրընկալել էր Գերմանիայում բնակվող ռուսախոս իրավապաշտպաններին, որոնց այցի նպատակը կազմակերպության գործունեությանը առավել մոտիկից ծանոթանալն ու համագործակցության նոր ծրագրերի մշակումն էր:

Գերմանաբնակ ռուսախոս երիտասարդների «Երիտասարդություն» միության և ռուսախոս ԼԳԲՏ անձանց «Կվարտիրա» հասարակական կազմակերպության թվով 8 ներկայացուցիչներ Հայաստանում անցկացրած շաբաթի ընթացքում «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի անդամների հետ միասին ծրագրեր մշակեցին, որոնց իրականացումը նախատեսված է 2017 թվականին: Հաջորդ տարի «Նոր Սերունդ»-ի անդամներն են այցելելու Գերմանիա՝համագործակցության ամրապնդման նպատակով:

«Մենք «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի հետ այս տարի մասնակցում էինք մի ծրագրի, որը տեղի էր ունենում Գերմանիայում և Ուկրաինայում: Մենք շատ արագ ընկերացանք հայկական պատվիրակության հետ և հասկացանք, որ կարող ենք համատեղ ծրագրեր իրականացնել»,- պատմում է Սվետլանա Պրոխորովան՝ «Երիտասարդություն» միության Բավարիայի գրասենյակի ներկայացուցիչը:

Սվետլանայի խոսքով՝ իրենց հաջողվել է երկու ծրագիր նախագծել, որի իրականացման համար համատեղ ջանքեր պետք է գործադրեն թե Հայաստանի, թե Գերմանիայի իրավապաշտպանները: «Արդեն կան գաղափարներ կոնկրետ ծրագրերի և դրանք առնչվում են ոչ միայն ԼԳԲՏ անձանց իրավունքներին: Միգրանտների իրավունքների վերաբերյալ էլ ենք ցանկանում ծրագիր իրականացնել: Միգրանտների խնդիրը շատ ակտուալ է Գերմանիայում»,- ասում է Սվետլանա Պրոխորովան:

«Կվարտիրա» ՀԿ-ի ներկայացուցիչ Յուլիա Գրինևան մեզ հետ զրույցում նշեց, որ իրենք օգնում են նախկին ԽՍՀՄ երկրների ներկայացուցիչներին ծանոթանալ և համագործակցել միմյանց հետ. «Ես շատ ուրախ եմ, որ մենք էլ ենք միացել այս ծրագրին: Հաճախ հարևան երկրներում աշխատող կազմակերպությունները մեր միջոցով են ավելի հեշտ կապ հաստատում իրար մեջ և սկսում համագործակցել: «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն իրականացնում է նաև ԼԳԲՏ անձանց իրավունքների պաշտպանությանն ուղղված ծրագրեր, ուստի մեր համագործակցության հնարավորությունները շատ մեծ են»:

«Այստեղ եկեղեցիները շատ տարբեր են...»

Յուլիան և Սվետլանան նաև կիսվեցին Հայաստանից ստացած իրենց տպավորությունների մասին. «Մեզ շատ դուր եկավ ամբողջ այցը, քանի որ մեզ վերաբերվում էին շատ ջերմ առանց որևէ պաթոսի, անմիջական: Ամեն ինչի մասին հոգ էին տարել մեր հայ գործընկերները: Երկիրը ևս շատ դուր եկավ, օրինակ, երբ շուկա ենք գնում, մարդիկ մանրամասն քեզ ներկայացնում են ապրանքը, սակայն քեզ չեն պարտադրում գնել այն, եթե ոչինչ չես գնում, հետևիցդ տհաճ բաներ չեն ասում: Մենք շատ համեղ ուտեստներ ենք ուտում այստեղ»,- ժպտալով ասում է Յուլիան:

«Հայաստանում մենք մշակութային լավ ծրագիր ունեինք. այցելեցինք Խոր Վիրապ, Էջմիածին, Գեղարդ: Այստեղ եկեղեցիները շատ տարբեր են, երբ ներս ես մտնում, զգում ես, որ սա մի վայր է, որտեղ դու կարող ես ինքդ քեզ հետ լինել՝ անկախ նրանից, թե դու որ կրոնին ես պատկանում: Այստեղ մարդիկ շատ բարեհամբույր են: Բոլոր պատրաստ են քեզ հետ խոսել՝ սրճարանում, տաքսիում»,- ասում է Սվետլանան: Գերմանաբնակ ռուսախոս իրավապաշտպանների խոսքով՝իրենք անհամբեր սպասում են հայ գործընկերների այցին՝Գերմանիա:

ԿՅԱՆՔՆ ԱՌԱՆՑ ՏՈՒԲԵՐԿՈՒԼՈԶԻ

2016 թվականի դեկտեմբերի 23-ին «Նոր Սերունդ»» ՄՀԿ-ի գրասենյակում տեղի ունեցավ ՀՀ համայքներում տուբերկոլոզի կանխարգելման վերաբերյալ իրազեկման բարձրացման և տուբերկոլոզի վաղ հայտնաբերման աշխատանքների կազմակերպման մասին սեմինար-դասընթացը: Դասընթացի ժամանակ ներկայացվեց վիճակագրությունը, քննարկվեց կանխարգելման միջոցները: Տեղի ունեցավ ակտիվ քննարկումներ մասնակիցների միջև:

Դասընթացին մասնակում էին «ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի կանխարգելումը և տեղեկացվածության մակարդակի բարձրացումը ՏՍՏ-ների շրջանում Շիրակի, Լոռու մարզերում և Երևան քաղաքում» ծրագրի շահառուները:

ՇՆՈՐՀԱՎՈՐ ԱՄԱՆՈՐ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

Հարգելի բարեկամ,

Եվս մի քանի օր և մենք հրաժեշտ կտանք 2016թ.ին: Այն մեզ համար եղել է կայացման և աշխատանքներով լեցուն ու պայքարի տարի:

2016թ-ին մեր ՀԿ-ն իրականացրել է բազմաթիվ ծրագրեր, որոնք ուղղված են եղել մարդու իրավունքների և շահերի պաշտպանությանը, քաղաքացիական հասարակության հզորացմանը, պետական կառույցների հետ համագործակցության ստեղծմանը, երիտասարդական փոխանակման ծրագրերի շարունակականությանը, ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի կանխարգելմանը:
Ցավով պետք է նշեմ, որ դեռ Հայաստանում մնացել են խնդիրներ, որոնք փոփոխության կարիք ունեն՝ այն է խարանի և խտրականության առկայությունը, դատարանների կողմնակալ վերաբերմունքը ռազմավարական նշանակություն ունեցող գործերին, ՔԿՀ-ներում խոցելի խմբերի հանդեպ եղած վերաբերմունքը և այլն: Անցնող տարում մենք իրավական և հոգեբանական խորհրդատվություն մատուցեցինք հարյուրավոր քաղաքացիների, իսկ ՄԻԱՎ-ի կանխարգելման վերաբերյալ մեր մատուցած խորհրդատվությունների թիվը հասնում է 1500-ի: Աջակցություն ցուցաբերեցինք նաև սոցիալապես անապահով ընտանիքներին: Հատկանշական էր նաև մեր ՀԿ-ի կողմից Հայաստանի քաղաքացիական հասարակության կառույցներին ենթադրամաշնորհային ծրագրերով աջակցելը և Հայաստանում տրանսգենդերների հիմնախնդիրներով զբաղվող առաջին ՀԿ-ի ստեղծումը: ՆՍՀԿ-ի թիմը համալրվեց նոր աշխատակիցներով և փորձագետներով, ձեռք բերեցինք նոր գործընկերներ ինչպես Հայաստանում, այնպես էլ նրա սահմաններից դուրս: Այս ամենը մեր համեստ ներդրումն է՝ հանուն մարդու իրավունքների պաշտպանության և քաղաքացիական հասարակության կայացմանը Հայաստանում: Այսպիսով, թույլ տվեք շնորհավորել բոլորիս գալիք Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ:

Թող 2017 թվականը լինի սիրո, հարգանքի և խաղաղության տարի:
Լավագույն ցանկություններով՝
Սերգեյ Գաբրիելյան

Հարգելիներս, Շնորհավորում եմ Ձեզ Նոր Տարվա և Սուրբ Ծննդյան տոնի կապակցությամբ: Թող գալիք նոր տարին բոլորիս համար լինի ձեռբերումների, վերելքների և հաջողությունների տարի:
Հայարփի Նորեյան

Նոր Տարում ցանկանում եմ, որպեսզի բոլորը լինեն առողջ և հոգ տանեն իրենց հարազատների և սիրելիների մասին: Եղեք սիրով և հարգանքով:
Արտյոմ Մովսեսյան

Շնորհավո՛ր Ամանոր և Սուրբ Ծնունդ
Ցանկանում եմ, որ 2017 թվականը լինի առողջության, սիրո, ուրախության, երջանկության տարի և թող ընձեռի նորը բացահայտելու հնարավորություն:
Սիրով՝ ***Տիրուհի Նազարեթյան***

Մաղթում եմ որ 2017 թվականը պատմության մեջ զետեղի միայն լավ ու դրական իրադարձություններ: Մարդկանց մեջ ավելանա լավատեսությունն ու հոգևոր ներդաշնակությունը:

Դավիթ Շահբազյան

Սիրելի ընթերցող, ի սրտե շնորհավորում եմ Քո Ամանորն ու Սուրբ ծնունդը: Թող 2017 թվականը լինի անձնական երջանկության և իրավունքների պաշտպանության տարի:
Սիրով ու հանգանքներով՝

Նարե Հովհաննիսյան

Հարգելի ընթերցող, Շնորհավորում եմ բոլորիս Նոր Տարվա կապակցությամբ: Ցանկանում եմ, որ 2017 թվականը լինի պակաս դժվարություններով և լի հաջողություններով տարի: Թող ձեր ներսի լույսը երբեք չմարի:

Արման Ղարիբյան

Սիրելի մարդիկ,

Ի սրտե շնորհավորում եմ այս գեղեցիկ տոների կապակցությամբ: Մաղթում եմ առողջություն, փոխադարձ հարգանք, սեր և հավասարություն: Թող, որ 2017 թվականը հնարավորություն ընձեռի խտրականությունը մեր հասարակությունում ի սպառ վերացնելու համար:

Արման Սահակյան

Նոր տարին եւ հատկապես Սուրբ ծնունդն այն բացառիկ տոներն են, որ միավորում են բոլորիս՝ անկախ ամեն ինչից: Դրանք տոներ են, որ առիթ են տալիս ամփոփելու անցնող տարին, ծրագրելու անելիքները, մտորելու գալիքի մասին: Ի վերջո, դրանք տոներ են որոնցից հույս է ճագառում, մարդեղություն բխում, միմիյանց հանդեպ սեր եւ հանդուրժողականություն ծորում: Այնպես որ՝ եւ ամանորը, եւ սուրբ ծնունդը մեզ համար նվիրական տոներ են, յուրաքանչյուրիս համար սպասված տոներ:

Շնորհավոր Նոր տարի եւ Սուրբ ծնունդ:

Լեւոն Չիլինգարյան